ԲՈՒՀ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ*

Կառլեն Խաչատրյան

Երևանի պետական համալսարան
Տնտեսագիտության թեկնածու
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ karlen.khachatryan@ysu.am

Քրիստինե Նիկողոսյան

Երևանի պետական համալսարանի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ qristinenikoghosyan@ysu.am
Հոդվածը ներկայացվել է 09.07.2021, գրախոսվել է 22.11.2021,
ընդունվել է տպագրության 07.03.2022
DOI:10.53548/0320-8117-2022.1-52
ՀՏԴ: 378.1(479.25) + 330

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտի ամենահրատապ խնդիրներից մեկը աշխատաշուկայի հետ կապի բացակայությունն է: Այս հիմնահարցի մասին շատ է խոսվել, և գրեթե բոլոր կառավարություններն իրենց ծրագրերում առանձնակի շեշտադրել են այդ հանգամանքը: Բացառություն չէ նաև ՀՀ կառավարության վերջին ծրագիրը, որն ընդունվել է 2019 թ. փետրվարի 8-ին, և որում հստակ ամրագրված է, որ մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու կրթական ծրագրերի արդիականացմանը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին, իսկ նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատություններում կրթության և ուսուցման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է գործատուների ակտիվ

* *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 21T-5B193 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:*

ներգրավմամբ ներդնել և ընդլայնել դուալ կրթական համակարգը՝ հաշվի առնելով տարածքային զարգացման գերակայությունները[1]:

Պատահական չէ, որ անկախությունից ի վեր ՀՀ բարձրագույն կրթական բարեփոխումների գործընթացի առանցքում մասնագիտական կրթական համակարգը աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին համապատասխանեցնելու և գործատուների պահանջներին առավելագույնս համապատասխանող շրջանավարտներ ունենալու հրամայականն է: Այս համատեքստում ՀՀ տնտեսական մրցունակ զարգացման մոդելը պետք է հիմնված լինի կրթության ոլորտի կատարելագործման և մարդկային կապիտալի զարգացման վրա:

ԲԿՀ-ի ինստիտուցիոնալ կառույցների դերի վերլուծություն

Ժամանակակից մրցակցային միջավայրում տեխնոլոգիական արագընթաց փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչպես նաև ՀՀ-ում կորոնավիրուսային համավարակով և պատերազմական իրողություններով պայմանավորված իրավիճակը լրջագույն մարտահրավեր են կրթական հաստատությունների և պետական/մասնավոր կազմակերպությունների համար:

Այսօր առավել քան երբևէ համալսարանների դերը սահմանափակված չէ միայն որակյալ մասնագետների և շրջանավարտների պատրաստմամբ: Ակադեմիական հաստատությունները պետք է նպատակ ունենան ակադեմիական նորարարության և բիզնես-գաղափարների զարգացման միջոցով նպաստել «ձեռնարկատիրական համալսարան»[2] հայեցակարգի գործնական իրականացմանը:

Բուհ-կազմակերպություն համագործակցության *(ԲԿՀ) ուսումնասիրության հիմքային բնութագիչներից է համագործակցությանը նպաստող ենթակառուցվածքների կամ մասնագիտացված կառույցների առկայությունը բուհական համակարգում:* Ընդհանուր առմամբ, բարձրագույն կրթության ոլորտում ԲԿՀ-ի զարգացման նպատակով ստեղծված առաջին կառուցվածքային ստորաբաժանումները կարիերայի ուղղորդմամբ զբաղվող կենտրոններն են: Թեև նմանօրինակ կառույցները ստեղծվել են դեռևս 1940 թ., սակայն դրանց գործունեությունն առավել հայտնի դար-

[1] ՀՀ կառավարության ծրագիր 2019, 32:
[2] Lundvall, Joseph, Chiamande, Vang 2009, 311-312.

ձավ 1970-1980 թթ., երբ աշխարհում շրջանավարտների գործազրկության բարձր ցուցանիշներ գրանցվեցին[3]:

ԲԿՀ-ի ինստիտուցիոնալ փոխազդեցությունների զարգացման նպատակով 1980-ական թվականների վերջերից զգալիորեն ավելացավ միջնորդավորված միավորումների/կառույցների քանակը[4]: Կարիերայի կենտրոնները դարձան շրջանավարտների և գործատուների միջև կապն ապահովող հիմնական օղակ[5], ուսանողների կարիերայի զարգացմանն ու գիտական արդյունքների խթանմանը նպաստող հիմնական ենթակառուցվածք[6], ինչպես նաև յուրօրինակ կամուրջ ծառայության, ուսուցման ու հետազոտության միջև[7]:

Այս ինստիտուտների մատուցած ծառայությունները զարգացել են աշխատանքի տեղավորման բաղադրիչից դեպի կարիերայի պլանավորման ծառայությունների ամբողջական շրջանակ[8]՝ աշխատանքային փորձի, ձեռնարկատիրական կրթության և «ձեռքբերումների պորտֆելի» (Portfolio of Achievements) ապահովման միջոցով[9]:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ համալսարան-կազմակերպություն համագործակցության բնույթը զարգացած երկրներում բավական լայն է և ներառում է ինչպես զբաղվածության, այնպես էլ կրթության, վերապատրաստման, հետազոտության և նորարարության ոլորտները[10], ուստի համանման գործընկերային հարաբերությունների վերջնական նպատակն է ձեռնարկատիրական համալսարան[11] և ակադեմիական ձեռնարկատիրություն[12] հայեցակարգերի գործնական իրականացումը՝ հիմքում ունենալով այնպիսի կրթական ծրագրեր, որոնք կխթանեն համալսարանի և կազմակերպության միջև փոխադարձ ուսուցման, միմյանց հետ տեղեկատվութ-

[3] Terzaroli 2019, 90.
[4] Freitas, Geuna, Rossi 2013, 51.
[5] McGrath 2002, 82.
[6] Chin, Cohen, Hora 2018, 2.
[7] Terzaroli 2019, 167.
[8] Terzaroli 2019, 167.
[9] Curaj, Deca, Pricopie 2020, 55.
[10] Martin 2000, 13, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf00 00120290/PDF/12029 0eng.pdf.multi.
[11] Etzkowitz 1983, 208-209.
[12] Klofstena, Fayolleb, Guerreroc, Miand, Urbanoe, Wright 2019, 150.

յան փոխանակման և փոխշահավետ համագործակցության հնարավորությունը[13]:

ՀՀ-ում ԲԿՀ-ի ինստիտուցիոնալ կառույցների դերի փորձագիտական վերլուծություն

Հաշվի առնելով ՀՀ-ում ԲԿՀ-ի ոլորտում կառուցվածքային ստորաբաժանումների վերափոխման և վերանայման անհրաժեշտությունը՝ փորձագիտական հարցազրույցների միջոցով ՀՀ-ի 6 խոշոր բուհերում[14] դիտարկվել և վերլուծվել են կարիերայի կենտրոնների, ձեռներեցության զարգացման կենտրոնների և հետազոտության և զարգացման (R&D) ստորաբաժանումների *գործունեության շրջանակները, մատուցվող ծառայությունները, համագործակցության մեխանիզմներն ու կապուղիները, իրականացված ծրագրերը, առկա խնդիրներն ու գործունեության ցանկալի տեսլականը:*

Կարիերայի ուղղորդմամբ զբաղվող կենտրոնների գործունեության ուսումնասիրության շնորհիվ կարող ենք եզրակացնել, որ համանման կենտրոններ գործում են բոլոր դիտարկված համալսարաններում: Համանման կենտրոնների գործունեությունը միտված է շրջանավարտների և ուսանողների մրցունակության ապահովմանը՝ տարաբնույթ կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացների, ուսումնական և արտաուսումնական պրակտիկաների, կամավորական աշխատանքների, գործատուների հետ հանդիպումների, վարպետության դասերի (մաստեր կլաս) անցկացման և խորհրդատվական ծառայությունների մատուցման միջոցով:

ԲԿՀ-ի ինստիտուցիոնալ կայացման առումով մեր դիտարկած բոլոր 6 բուհերում էլ կատարվել են որոշակի գործառնական վերափոխումներ:

Մասնավորապես, **Երևանի պետական համալսարանում** Շրջանավարտների և կարիերայի կենտրոնին զուգահեռ, ԵՊՀ գիտական խորհրդի 2013 թ. մայիսի 30-ի N 8/4 որոշմամբ ստեղծվել է ԵՊՀ գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով: Հանձնաժողովի նպատակներն էին ԵՊՀ-ի առանձին

[13] Nakagawa, Takata, Kato, Matsuyuki, Matsuhashi 2017, 39.

[14] *1. Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), 2. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (ԲՊՀ), 3. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ), 4. Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ), 5. ՀՀ պետական կառավարման ակադեմիա (ՊԿԱ), 6. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան(ՀԱՊՀ)*:

ստորաբաժանումների և ձեռնարկությունների համագործակցության կայացմանը նպաստելը, ֆակուլտետներում գործող ձեռնարկությունների հետ համագործակցության խորհուրդների աշխատանքը համակարգելը, ուսանողների կարիերայի խնդիրներին առնչվող և ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն աջակցելը: Հանձնաժողովների անդամների հաստատումը եղել է, և մի քանի նիստեր են տեղի ունեցել, սակայն դեռևս որևէ գործնական քայլ այս ուղղությամբ չի կատարվել՝ պայմանավորված և՛ ներգրավված գործատուների, և՛ ֆակուլտետային ներկայացուցիչների ու համալսարանի վարչական կազմի շահագրգռվածության բացակայությամբ:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կարիերայի կենտրոնը բավական ակտիվ է միջազգային ծրագրերին ուսանողների մասնակցության խթանման և աջակցության հարցերում: Մասնավորապես, Եվրոպական համերաշխության կորպուսի և Եվրոպական կամավորական ծառայություն ծրագրերի շրջանակում կենտրոնը շրջանավարտներին օգնում է մասնակցելու նշված ծրագրերին և, միաժամանակ լինելով ուղարկող և հյուրընկալող կողմ, Էրազմուս+կրեդիտային շարժունության ծրագրերում միջազգային համագործակցության բաժնի հետ իրականացնում է ուսանողների բազմաձավալ աջակցություն և բավական ակտիվ աշխատում է միջազգային գործընկեր համալսարան-կազմակերպությունների հետ՝ համանման ծրագրերի իրականացման նպատակով:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում և Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մասամբ գործարկվել են ums.asue.am և ums.anau.am էլեկտրոնային կառավարման հարթակները, որոնք բուհի կառավարման ավտոմատացման համակարգեր են՝ նպատակ ունենալով ստեղծել ուսանողի անձնական էջը, որը նրան հնարավորություն կտա տեսնելու իր ուսումնական պլանները, կրեդիտային շարժը, նախատեսվող դասընթացները, անձնական տվյալները: Ընդ որում, 2 բուհերում էլ հետագայում նախատեսվում է պորտալի բարելավման միջոցով հնարավորություն տալ ներբեռնելու ինքնակենսագրական տվյալները և նշելու ոլորտային հետաքրքրությունները, որի շնորհիվ ուսանողի և կարիերայի կենտրոնի միջև կհաստատվի ուղիղ կապ, ուսանողի աշխատանքային հետաքրքրությունների շրջանակը առավել տեսանելի կլինի, իսկ կենտրոնի կողմից ուսանողին առաջարկվող աշխատանքային հնարավորությունները կլինեն առավել հասցեական և թիրախավորված:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում նաև նախատեսվում է ստեղծել ուսանողների մեկ միասնական պլատֆորմ՝ HEN-GEAR պլատֆորմի տիպօրինակով և վերոնշյալ UMS-ի բազաների հիման վրա. դա հնարավորություն կտա կենտրոնի և ուսանողի միջև կապը դարձնելու առավել արդյունավետ:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում կարիերայի կենտրոնը ուսանողների **աշխատունակության և աշխատանքային պատրաստվածության** բարձրացման նպատակով հիմնական դասավանդող կազմի ընտրությունը կատարել է ՀՀ պետական կառավարման ոլորտի նախկին և ներկա պաշտոնյաների կազմից: Ըստ կենտրոնի հրապարակած տարեկան հաշվետվության՝ բուհի ուսանողների առնվազն 72%-ը պետական ոլորտում է աշխատում: Սա, իհարկե, չի արտացոլում կենտրոնի նախաձեռնությամբ կամ աջակցությամբ աշխատանքի անցած ուսանողների քանակը: Այստեղ պետք է նկատի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՊԿԱ-ն տալիս է միայն մագիստրոսական կրթություն, և ընդունվող ուսանողների մեծ մասն արդեն իսկ զբաղված է կամ ունի որոշակի փորձ:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում կարիերայի կենտրոնի առաջնահերթ նպատակներից է իր շրջանավարտներին կրկին բուհ բերելը՝ նրանց հնարավորություն տալով իրենց փորձը հաղորդելու դասախոսությունների միջոցով: ՀԱՊՀ-ում ևս նախատեսվում է ստեղծել էլ. հարթակ՝ կարիերայի կենտրոնի և ուսանողի միջև հաղորդակցության ապահովման համար:

Այսպիսով, Հայաստանի 6 դիտարկված բուհերում առկա են և գործում են կարիերայի կենտրոններ, սակայն դրանք բնութագրվում են հետևյալ խնդրային հայտանիշներով՝

- *մարդկային ռեսուրսների սակավություն*
- *ֆինանսական միջոցների սղություն*
- *գործատուի հետ հետադարձ կապի ապահովման ոչ պատշաճ մեխանիզմ*
- *հաշվետվողական թվերի ոչ այնքան արժանահավատ լինելը*
- *ինստիտուցիոնալ համագործակցության բացակայություն ներհամալսարանական ենթակառույցների, ստորաբաժանումների և ֆակուլտետների միջև և կողմերի շահագրգռվածության բացակայություն*
- *ուսանողական էլ. հասցեների օգտագործման ցածր ցուցանիշներ*

- *ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման ոչ ամբողջական բազաներ կամ չձևավորված մեխանիզմներ և անհրաժեշտ հարթակների բացակայություն*
- *ուսանողներին ներկայացվող աշխատանքային առաջարկների ոչ հասցեական և ոչ նպատակային բնույթ*
- *գործատուների և ուսանողների կարիքների գնահատման մեխանիզմի բացակայություն:*

Կարիերայի ուղղորդմամբ զբաղվող կենտրոնների գործունեությունը թերևս միտված չէ այնպիսի գործիքների կիրառմանը կամ ծառայությունների մատուցմանը, որոնք շրջանավարտների և գործատուների պահանջների միջև կապահովեն **«լավագույն համապատասխանություն»**: Ավելին՝ ուսանող/շրջանավարտների **աշխատունակության և աշխատանքային պատրաստվածության** բարձրացման նպատակով տարվող աշխատանքները սահմանափակվում են ոչ արդի գործիքների ստարդարտ կիրառմամբ: Այս առումով անհրաժեշտ է իրականացնել ուսանողների և գործատուների կարիքների գնահատում, որը համապատասխանաբար հնարավորություն կտա լուծելու վերոնշյալ խնդիրները:

ԲԿՀ-ի շրջանակում դիտարկվող ենթակառուցվածքային ստորաբաժանումներից են նաև ինովացիոն գաղափարների գեներացմամբ և աջակցությամբ զբաղվող կենտրոնները: Վերոնշյալ վեց բարձրագույն ուսումնական հաստատություններում համանման կենտրոնները բնութագրվում են հետևյալ հայտանիշներով՝ *բացակայում են, դադարեցված է գործունեությունը, գործող կենտրոններ են՝ հաջողված կամ չհաջողված ծրագրերով:*

Երևանի պետական համալսարանում 2017 թ. հիմնվել է ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնը, որը, կառուցվածքային և աշխատակազմի փոփոխություններով պայմանավորված, 2019 թ. ի վեր չի գործում: Կենտրոնի գործունեությունը միտված է եղել ԵՊՀ ուսանողների շրջանում ձեռներեցության զարգացմանը և ինովացիոն ուղղությամբ հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

Համալսարանի մասնաշենքերից մեկում տեղակայված է նաև «Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը» (ISTC), որի առաքելությունն է ՏՏ ոլորտում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական կարողությունները զարգացնելը և ամրապնդելը, կրթու-

թյան բնագավառում հետազոտական ներուժը խորացնելը, ինչպես նաև բիզնեսի կայուն զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծելը:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում Erasmus+ Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացում ծրագրի Smart նախագծի շրջանակում, 2019 թ. ԲՊՀ-ի կարիերայի կենտրոնի կազմում գործում է Սմարթ ձեռնարկատիրական կենտրոնը («Smart Caffe»), որը նպատակ ունի զարգացնել համալսարան-ձեռնարկություն համագործակցությունը և նպաստել ուսանողների ձեռնարկատիրական գաղափարների զարգացմանը՝ Smart Caffe-ների միջոցով: Ծրագրով նախատեսվում է ԲՊՀ-ի հիմնադրամի ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև այլ շահակիցների ձեռնարկատիրական հմտությունների ու կարողությունների զարգացում, աջակցություն սկսնակ բիզնես-գաղափարների զարգացմանը և իրագործմանը: 2021-2024 թթ. ԲՊՀ-ն Էրազմուս+ Կոննեկտ («Համալսարան-տնտեսություն կապի հաստատումը Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի ուսանողների խելամիտ ձեռներեցային համագործակցության և մրցունակության միջոցով») ծրագրի մասնակից է, և ծրագրի ընդհանուր նպատակներից է համալսարան-տնտեսություն կապի ամրապնդումը՝ հիմնված Արևելյան գործընկերության բուհերի խելացի (հարմարեցված) ձեռնարկատիրական մոտեցման վրա:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

2019 թ. հիմնադրվել է Change Lab (Փոփոխությունների լաբ), որը միտված է ուսանողների զբաղվածության ապահովմանը՝ ստարտափ գաղափարների կամ սոցիալական ձեռնարկատիրության զարգացման միջոցով: Լաբի նպատակն է «փոփոխությունների գործակալների և խնդիր լուծողների» վերապատրաստումը՝ հիմնված գործատուների կարիքների ու խնդիրների գնահատման վրա: Լաբը խնդիր է դրել ուսանողներին փոխանցել գործնական գիտելիքների և հմտությունների այնպիսի շրջանակ, որի անհրաժեշտությունը առկա է աշխատաշուկայում. դրա շնորհիվ կպատրաստվեն կոնկրետ հիմնահարցի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներով զինված «խնդիր լուծող» մասնագետներ:

ՀՀ ՊԿԱ-ում չի գործում համանման կենտրոն, և չնայած այն հանգամանքին, որ բուհում գործարկվել է «Գործարար վարչարարություն (MBA)» ծրագիրը, սակայն այս մասով դեռևս չկան կատարված աշխատանքներ:

ՀԱԱՀ-ում 2019 թ. հիմնադրվել է ՀԱԱՀ ագրոտեխնոլոգիաների ինկուբատորը, որի նպատակն է ագրոբիզնեսի ոլորտի նորաստեղծ կազմակերպություններին և ձեռնարկատերերին աջակցելը՝ տրամադրելով տեխնոլոգիական և գործարար ծառայություններ, համատեղ աշխատանքի տարածք և մեկնարկային ֆինանսավորում:

ՀԱՊՀ-ում 2017 թ. գործում է UCOM համակարգչային և ցանցային տեխնոլոգիաների լաբորատորիան, որի նպատակը ամրագրված և շարժական կապի ծառայություններ մատուցող UCOM ընկերության տեխնիկական անձնակազմը համալրող ապագա մասնագետների ուսուցումն ու նախապատրաստումն է:

«Տաշիր» ընկերությունների խմբի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության նախաձեռնությամբ 2017 թ. ՀԱՊՀ-ում գործում են աշխարհահռչակ ֆրանսիական «Schneider Electric» ընկերության «Գերազանցության» և «Կասկադ» ընկերության ինովացիոն կենտրոնները, որտեղ առկա են էներգետիկ և ավտոմատացման ոլորտի ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ:

ՀԱՊՀ-ում գործում է նաև **Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաները (ANEL)**, որը հիմնադրվել է 2013 թ.: Այն առավել քան 30 մասնագիտացված, ունիվերսալ ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներից կազմված փորձարարական կենտրոն է: ANEL-ի հիմնական խնդիրներն են նորարար բիզնես գործունեության զարգացմանը նպաստելը, Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերություններում առկա աշխատակիցների պակասը լրացնելը: ANEL-ի մատուցվող ծառայությունների շրջանակը բավական լայն է և ներառում է 3 բաղադրիչ՝ ուսումնական/կրթական, գիտահետազոտական, ինովացիոն:

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության (ՏՀՏԳՄ) և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի համագործակցության շնորհիվ՝ 2020 թ. ՀԱՊՀ-ում բացվել է նաև «**Խելացի լուծումների կենտրոնը»**, որը գործունեություն է ծավալում երեք ուղղությամբ՝ մագիստրոսական կրթական ծրագիր, մասնագիտական վերապատրաստման ծրագիր և միջմասնագիտական վերապատրաստումներ:

ՀԱՊՀ-ում 2005 թվականից գործում է նաև «**Գիտական հետազոտությունների և ինովացիոն մշակումների»** կենտրոնը: Դրա նպատակը

գիտատեխնոլոգիական հետազոտությունների և նորարարական գործունեության համակարգումն ու սպասարկումն են՝ ինովացիոն ծառայությունների մատուցման, տեխնոլոգիական ինովացիոն հարթակի աշխատանքների կազմակերպման միջոցով:

Այս կենտրոնների վարչական անձնակազմի հետ հարցազրույցների ընթացքում բացահայտել ենք հետևյալ խնդիրները՝

- *ոչ բավարար ֆինանսական միջոցներ*
- *բուհերի տեխնիկական և տարածքային թերի ապահովվածություն*
- *մտավոր սեփականության իրավունքի կարգավորման իրավական բացեր*
- *ներհամալսարանական կառույցների միջև փոխգործակցության և ինստիտուցիոնալ փոխհամաձայնության բացակայություն*
- *ինստիտուցիոնալ կառույցների գործողությունների պլանի և մարտավարության ոչ միանշանակ ձևակերպում և գործնական տեսանկյունից ոչ մասնագիտական և անարդյունավետ գործունեություն*
- *ուսանողների շրջանում նորարարական մտածողության բացակայություն՝ հատկապես հումանիտար մասնագիտացմամբ*
- *պետական աջակցության անբավարար հնարավորություններ*
- *համալսարանի և մասնավոր կազմակերպությունների միջև փոխըմբռնման և վստահության բացակայություն:*

Ուսումնասիրված բուհերում ուսանողների բիզնես-գաղափարների զարգացումն ապահովող ինստիտուցիոնալ կենտրոնները բացակայում են կամ արդյունավետության ցածր ցուցանիշներ են գրանցել: Դրանք պետք է նպատակային առաջնահերթություն դարձնեն բիզնես-պլաններ կազմելը և տեխնիկական (մտավոր սեփականության իրավունք) ու ֆինանսական աջակցություն տրամադրելը: Հարկ է նկատի ունենալ, որ, բացի տեխնիկական կամ ճշգրիտ գիտությունների ոլորտում նորարարական գաղափարներից, պետք է գտնել նաև հումանիտար ոլորտում ուսանողների նորարարական գաղափարների գեներացման ուղիներ: Այս առումով *կրթական պարտադիր մոդուլի ներդրումը բոլոր մասնագիտացումների համար* կարող է բավական կարևոր խթան դառնալ ԲԿՀ ոլորտի բարեփոխումների համատեքստում:

ԲԿՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների տարատեսակ է համարվում Հետազոտություն և զարգացում/(R&D, Research and Development) միավորների ստեղծումը: ՀԱՊՀ-ն և ՃՇՀԱՀ-ը մաս են կազմում ALL4R&D ծրագրի (https://all4rd.net/#), որի նպատակը գիտության,

հետազոտության և նորարարության զարգացումն է՝ R&D միավորների ստեղծման միջոցով, և 2021 թ. համանուն բուհերում տեղի ունեցավ ***R&D միավորների*** գործարկումը:

Սույն միավորների գործարկումը ՀՀ-ում բավական նոր գործընթաց է, սակայն կատարված հետազոտության ընթացքում բացահայտել ենք հետևյալ խնդիրները՝

- *համալսարանական հետազոտությունների ստանդարտ և տեսական բնույթը, որը գրեթե չի բխում շուկայում առկա պահանջարկից*
- *նորարարական համագործակցային մշակույթի բացակայությունը*
- *ոլորտի որակավորված մասնագետների բացակայությունը*
- *պետական ֆինանսական աջակցության ցածր ցուցանիշները*
- *ոլորտի պետական իրավական կարգավորումների բացակայությունը:*

Վերհանելով ԲԿՀ համագործակցության կառուցակարգերի և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը՝ կարող ենք եզրակացնել, որ համանման բազմագործառնությունը հատկապես զարգացող երկրներում թերևս «կաղում» է՝ գլխավորապես պայմանավորված ֆինանսական միջոցների անբավարար լինելու հանգամանքով: Ֆինանսական միջոցների սակավությունը, մի կողմից, բուհերի համար շարժառիթ է համագործակցելու մասնավոր կազմակերպությունների հետ, մյուս կողմից, ոչ բավարար ֆինանսական միջոցները խոչընդոտում են արդյունավետ համագործակցային ենթակառուցվածքների և մեխանիզմների գործարկմանը: Եթե համադրենք տարբեր երկրների ոլորտին ուղղվող ծախսերի մասնաբաժինները ՀՆԱ-ում, ապա դրանք հնարավորություն կտան որոշակի պատկերացում կազմելու ԲԿՀ ոլորտի ֆինանսական ներդրումային վիճակի վերաբերյալ (տե՛ս գծապատկեր)[15]:

Գծապատկերից երևում է, որ 2019 թ. Իտալիայի ներդրումը գիտության ոլորտում կազմել է ՀՆԱ-ի ընդամենը 1,4 %-ը, գրեթե համահավասար ՌԴ-ին (1.03%), այնինչ եվրոպական տարածաշրջանի երկրներից Բելգիայի (2.8%) և Ֆրանսիայի (2.9%) դեպքում այդ ցուցանիշները շուրջ երկու անգամ ավելի են: Իսկ, օրինակ, ԱՄՆ-ն 3.06% ցուցանիշով զիջում է Ճապոնիային (3.2%) և Կորեային (4.6%)[16]: Սույն ցուցանիշը կարևոր է, քանզի հնարավո-

---

[15] Brusoni, Malerba 2007, 253.

[16] Gross domestic spending on R&D, OECD Data, 2017-2019, https://data.oecd.org/rd/gross-domestic-spending-on-r-d.htm, Gross domestic spending on R&D. World Bank Data, 2017-2019, https://data.world bank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS?locations=AM

ություն է տալիս պատկերացում կազմելու երկրի գիտատեխնոլոգիական առաջընթացի և այդ ոլորտում տարվող աշխատանքների մակարդակի վերաբերյալ:



Գիտություն/հետազոտություն ոլորտին ուղղվող համախառն ներքին ծախսերի տոկոսային հարաբերակցությունը ՀՆԱ-ում, 2017-2019 թթ., %

Այսօր գիտության և հետազոտության ոլորտում կատարվող ներդրումները աշխարհում գերակայությունների շարքում են, սակայն շատ երկրներում գիտահետազոտական և տեխնոլոգիական բիզնեսները չունեն պետական ֆինանսական աջակցության լայն հնարավորություններ:

Եզրակացություններ

Հաշվի առնելով վերհանված խնդիրները՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում բուհ-կազմակերպություն համագործակցության ռազմավարական զարգացման տեսլականը ենթադրում է գործողությունների ծրագրի մշակում կամ վերափոխում՝ միտված ոլորտի հայեցակարգային, գործառնական և կառուցվածքային փոփոխություններին: Նմանօրինակ փոփոխությունների կատարման կարևոր հիմք է ԲԿՀ ինստիտուցիոնալացումը՝ համապատասխան մասնագիտական կառույցների ստեղծման միջոցով: Անհրաժեշտ է այդ կառույցների ինքնանպատակ գործունեությունը դարձնել առավել հասցեական և նպատակային: Ուսումնասիրելով ՀՀ-ում ԲԿՀ ոլորտի կառուցվածքային 3 տեսակի ստորաբաժանումները՝ կարող ենք եզրակացնել, որ կենտրոնների գործունեությունը ֆինանսական, նաև տեխնիկական տեսանկյունից ունի վերափոխումների կարիք:

Այսպիսով՝ երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովումը և գիտահետազոտական ոլորտի արդյունավետության բարձրացումը ՀՀ-ում համարվում են առաջնահերթ և կարևոր խնդիր: Այս համատեքստում գիտատեխնոլոգիական և հետազոտական առաջընթացի իրագործումը հնարավոր է իրականացնել ամենատարբեր ձևաչափերով և կառուցակարգերով: Նկատի ունենալով բուհ-կազմակերպություն համագործակցության բազմաֆունկցիոնալ կապուղիների շրջանակը՝ անհրաժեշտ է մշակել ռազմավարական պլաններ և համապատասխան գործողություններ՝ R&D գիտություն/հետազոտություն ոլորտում եռակողմ (բուհ, կազմակերպություն, պետություն) գործընկերային մոտեցման ներդրման և զարգացման միջոցով:

Գրականություն

ՀՀ կառավարության ծրագիր 2019, 70 էջ:

Brusoni S., Malerba F. 2007, Perspectives on Innovation, Cambridge University Press, BEC Library, 498 p.

Chin Yuk M., Cohen B., Hora M. 2018, The Role of Career Services Programs and Sociocultural Factors in Student Career Development, Wisconsin Center for Education Research, University of Wisconsin–Madison, No. 8, 29 p.

Curaj A., Deca L., Pricopie R. 2020, European Higher Education Area: Challenges for a New Decade 596 p., https://doi.org/10.1007/978-3-030-56316-5, (ներբեռնման օրը՝ 09.06.2021).

Etzkowitz H. 1983, Entrepreneurial Scientists and Entrepreneurial Universities in American Academic Science, Entrepreneurial Science in American Universities, vol. 21, No. 2/3, 198-233 p.

Freitas I., Geuna A., Rossi F. 2013, Finding the Right Partners: Institutional and Personal Modes of Governance of University–Industry Interactions, Research Policy, N 42, p. 50-62.

Gross domestic spending on R&D, OECD Data, 2017-2019, https://data.oecd.org/rd/gross-domestic-spending-on-r-d.htm (ներբեռնման օրը՝ 20.06.2021).

Gross domestic spending on R&D. World Bank Data, 2017-2019, https://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS?locations=AM (ներբեռնման օրը՝ 22.06.2021).

Klofstena M., Fayolleb A., Guerreroc M., Miand S., Urbanoe D., Wright M. 2019, The Entrepreneurial University as Driver for Economic Growth and Social

Change - Key Strategic Challenges, Technological Forecasting & Social Change, V. 141, p. 149-158.

Lundvall B., Joseph K., Chiamande K., Vang J. 2009, Handbooks of Innovation Systems and Developing Countries: Building Domestic Capabilities in a Global Setting, Edward Elgar Publishing, BEC Library, 416 p.

Martin M. 2000, Managing University-Industry Relations: A Study of institutional practices from 12 different countries, International Institute for Educational Planning/UNESCO, 177 p., https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000120290/PDF/120290eng.pdf.multi (ներբեռնման օրը՝ 05.06.2021).

McGrath G. 2002, The Emergence of Career Services and their Important Role in Working with Employers, New Directions for Student Services, no. 100, Wiley Periodicals, p. 69-83, https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1002/ss.71?saml_referrer (ներբեռնման օրը՝ 08.06.2021).

Nakagawa K., Takata M., Kato, K., Matsuyuki T., Matsuhashi T. 2017, A University–Industry Collaborative Entrepreneurship Education Program as a Trading Zone: The Case of Osaka University, Technology Innovation Management Review, vol. 7, Is. 6, 38-49 p.

Terzaroli C. 2019, Career Services as an Institutional Approach to Employability, Open Journal Per la Formazione in Rete, vol. 19, p. 161-177.

Terzaroli C., Oyekunle Y. 2019, Career Service as a Measure to Support Employability: A Comparison Between the University of Florence and The University of Lagos, Studies in Adult Education and Learning, N 25(1), p. 89-110.

ԲՈՒՀ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Կառլեն Խաչատրյան, Քրիստինե Նիկողոսյան

Ամփոփում

Բուհ-կազմակերպություն համագործակցության ուսումնասիրության հիմքային բնութագիչներից է ենթակառուցվածքների կամ մասնագիտացված կառույցների առկայությունը համալսարաններում: Համալսարանների գործունեությունը այսօր պետք է ուղղված լինի ոչ միայն որակյալ մասնագետների, շրջանավարտների պատրաստմանը և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, այլ նաև ակադեմիական ձեռնարկատիրության և ուսանողական նորարարության տեսական ու գործնական ներդրմանը: ՀՀ 6

բուհերում ինստիտուցիոնալ կառույցների դերի վերլուծության միջոցով վեր են հանվել առկա խնդիրները, և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության միջոցով ներկայացվել են դրանց լուծման ուղիները:

Բանալի բառեր՝ ձեռնարկատիրական համալսարան, ակադեմիական նորարարություն, կարիերայի կենտրոն, ստարտափ, ակադեմիական բիզնես (Spin-off), ձեռներեցության զարգացման կենտրոններ, հետազոտություն և զարգացում:

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ВОПРОСЫ ПАРТНЕРСТВА ВУЗ-ОРГАНИЗАЦИЯ В РА

Карлен Хачатрян, Кристине Никогосян

Резюме

Одной из основных характеристик исследования партнерства между ВУЗ-ом и организацией является наличие специализированных структур или инфраструктур, способствующих сотрудничеству в университетах. Университеты должны быть нацелены не только на подготовку квалифицированных специалистов, выпускников и повышение их конкурентоспособности на рынке труда, но и на развитие академического предпринимательства и студенческих инноваций на теоретическом и практическом уровне. Посредством анализа институциональных структур в 6-ти высших учебных заведениях в РА были выявлены существующие проблемы, решение которых возможно на основе изучения лучших международных практик.

Ключевые слова – предпринимательский университет, академические инновации, центр карьеры, стартап, спин-офф, центры развития предпринимательства, исследования и развитие.

INSTITUTIONAL ISSUES OF UNIVERSITY-ORGANIZATION PARTNERSHIP IN RA

Karlen Khachatryan, Kristine Nikoghosyan

Abstract

One of the basic characteristics of the university-organization partnership study is the existence of specialized structures or infrastructures promoting

cooperation within universities. Universities should be aimed not only to train qualified specialists, graduates and increase their competitiveness in the labor market, but also to develop academic entrepreneurship and student innovation in a theoretical and practical level. Through the analysis of the institutional structures in 6 higer education universities of the Republic of Armenia, existing problems have been identified and through the study of international best practices the steps for their solving have been presented.

Key words – Entrepreneurial University, Academic Innovation, Career Center, Start-up, Spin-off, Entrepreneurship Development Centers, R&D Research and Development.